ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժին

ք. Երևան,0078, Հալաբյան 41ա, հեռ.060713456

Ելք N 0017149494, 16 փետրվարի 2024 թ.

Կարեն Համլետի Արիստակեսյան
Ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ռուբինյանց Փ., 10
Շ., Բն. 16

Մարինե Նուրբեկյան Նորիկի
ք. Երևան, Արաբկիր, Ռուբինյանց Փ.,Շենք 10

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարան

ՈՐՈՇՈՒՄ

Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին

16 փետրվարի 2024 թ. **ք. Երևան**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժին, Գլխավոր խորհրդատու արդարադատության կապիտան Արամ Ամիրջանյանս ուսումնասիրելով թիվ **11786654** կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից **14 փետրվարի 2024 թ.** տրված թիվ **ԵԴ2/0780/02/24** կատարողական թերթի համաձայն պետք է՝ *պարտավորեցնել Կարեն Համլետի Արիստակեսյանին վճարել ալիմենտ՝ 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով Մարինե Նորիկի Նուրբեկյանի խնամքին գտնվող 30.01.2019 թվականին ծնված Նարեկ Կարենի Արիստակեսյանի համար՝ մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի կայացումը:*

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 62, 71 -րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Պարտավորեցնել ***Կարեն Համլետի Արիստակեսյանին*** *վճարել ալիմենտ՝ 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով Մարինե Նորիկի Նուրբեկյանի խնամքին գտնվող 30.01.2019 թվականին ծնված Նարեկ Կարենի Արիստակեսյանի համար՝ մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի կայացումը:*

Որոշումը ենթակա է անհապաղ կատարման

Որոշման պահանջները չկատարելու դեպքում կկիռարվեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով սահմանված հարկադիր կատարման միջոցներ

Որոշման պատճենն ուղարկել կողմերին և դատարան:
Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.
Համաձայն քրեական օրենսգրքի 507 հոդվածի՝ 1. Օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարմանը խոչընդոտելը, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը դրանով սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ այն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կամ տվյալ ակտի կատարման շրջանակներում հարկադիր կատարողի սահմանած ժամկետում պարտապանի կամ նրա իրավատու անձի կողմից չկատարելը, եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ, կամ տվյալ ակտով արգելված գործողություն կատարելն այդ արգելքի գործողության ժամանակահատվածում՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ

տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Գլխավոր խորհրդատու՝ Ա. Ամիրջանյան

ստորագրություն՝